Շուրջ 6 դատավոր լիազորությունների դադարեցման մասին դիմում է գրել

17.12.2012 18:04

Հայաստանի դատական համակարգում լուրջ տեղաշարժեր են սպասվում: Panorama.am-ի աղբյուրների հաղորդմամբ շուրջ 6 դատավոր իրենց լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ դիմում են գրել: Հայաստանի դատական դեպարտամենտի լրատվական ծառայության ղեկավար **Արսեն Բաբայանը** Panorama.am-ի թղթակցի հետ զրույցում ոչ հերքեց և ոչ էլ հաստատեց լուրը՝ ասելով, որ իրեն նման տեղեկություն հայտնի չէ:

Ավելի վաղ Panorama.am-ը տեղեկացրել էր, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանը 20 դատավորների վերաբերյալ համապատասխան հաղորդում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին: Բացի այդ 2 դատավորի վերաբերյալ հաղորդում է ներկայացրել Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցն օրենքով սահմանված կարգով քննարկելու համար, որի քննության արդյունքներով երկու դատավորի նկատմամբ հարուցվել են կարգապահական վարույթներ:

«Արդարադատության խորհրդի վարույթներ գաղտնի են և դրանց վերաբերյալ ոչինչ չի կարելի հրապարակել, մինչև չավարտվի վարույթը և չլինի ուժի մեջ մտած որոշում», Panorama.am-ի թղթակցի հետ զրույցում ասաց Արսեն Բաբայանը:

Սկզբնաղբյուրը՝ http://www.panorama.am

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })